



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, /0261/ 6-13-54, 6-17-99

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2012թվականի N – 10

### ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՀԱՅԱԾ ԲՆԱԿՉԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով „Տեղական ինքնակառավարման մասին“ ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի, „Սոցիալական աջակցության մասին“ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի և 22-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, Դդմաշեն համայնքի ավագանու 2012 թվականի հունվարի 16-ի „2012թ. տարեկան բյուջեի հաստատման մասին“ թիվ 1-Ն որոշումը և ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին“ ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով՝

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Դդմաշեն համայնքում մահացած ներքոհիշյալ բնակիչների ընտանիքներին Դդմաշեն համայնքի վարչական բյուջեի սոցիալական այլ ծրագրերի /10.3.1/ 4726 հոդվածից տրամադրել հուղարկավորության նպաստ.

1/ Լիդա Արտաշի Հունանյանի ընտանիքին - 40.000 /քառասուն հազար/ դրամ: Գումարը տրամադրել հանգուցյալի ամուսնուն՝ Միմոն Խանամիրի Մարտիրոսյանին:

2/ Հայկանդուխտ Արշակի Սարգսյանի ընտանիքին - 40.000 /քառասուն հազար/ դրամ: Գումարը տրամադրել հանգուցյալի դստերը՝ Սաթենիկ Խաչիկի Ենոքյանին:

3/ Օյա Երվանդի Ստեփանյանի ընտանիքին - 40.000 /քառասուն հազար/ դրամ: Գումարը տրամադրել հանգուցյալի որդուն՝ Վաչիկ Խաչիկի Հայրապետյանին:

**ԸՆԴՀԱՄԵՆԸ - 120.000 /հարյուր քսան հազար/ դրամ**

2. Գլխավոր մասնագետին - կատարել համապատասխան գործարքներ:


3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԴԴՄԱՇԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

2012թ. Տարբեր 28  
գ.Դդմաշեն





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, /0261/ 6-13-54, 6-17-99

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2012թվականի N – 11-Ա

### ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին“ Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Դդմաշեն համայնքի սեփականություն համարվող գույքի օտարման գործընթացները կազմակերպելու համար ստեղծել աճուրդային հանձնաժողով /այսուհետ՝ հանձնաժողով/ հետևյալ կազմով.

- 1/ Կորյուն Մանուկյան - համայնքի ղեկավարի տեղակալ - հանձնաժողովի նախագահ
- 2/ Նորայր Մանուկյան - համայնքի ղեկավարի օգնական - հանձնաժողովի անդամ
- 3/ Բորիս Հակոբյան - աշխատակազմի գլխավոր մասնագետ - հանձնաժողովի անդամ

2. Հանձնաժողովին - համայնքի սեփականություն համարվող գույքի օտարման գործընթացները կազմակերպել „Հրապարակային սակարկությունների մասին“ Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 12թ. Տարբեր 28  
գ.Դդմաշեն





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք  
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, /0261/ 6-13-54, 6-17-99

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ապրիլի 2012թվականի N - 12

### ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾՆՎԱԾ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻՆ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով „Տեղական ինքնակառավարման մասին“ ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի, „Սոցիալական աջակցության մասին“ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի և 22-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, Դդմաշեն համայնքի ավագանու 2012 թվականի հունվարի 16-ի „2012թ. տարեկան բյուջեի հաստատման մասին“ թիվ 1-Ն որոշումը և ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին“ ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ընտանիքում նոր երեխա ծնվելու կապակցությամբ Դդմաշեն համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ բնակիչներին Դդմաշեն համայնքի վարչական բյուջեի սոցիալական այլ ծրագրերի /10.4.1/ 4722 հոդվածից տրամադրել մայրության նպաստ.

- 1/ Արմինե Գազիկի Կիրակոսյանին - 30.000 /երեսուն հազար/ դրամ
  - 2/ Ռուզան Մանվելի Սահակյանին - 30.000 /երեսուն հազար/ դրամ
  - 3/ Զենֆերիկ Գառնիկի Պետրոսյանին - 30.000 /երեսուն հազար/ դրամ
  - 4/ Լուսինե Գարեգինի Հայրապետյանին - 30.000 /երեսուն հազար/ դրամ
- ԸՆԴՀԱՄԵՆԸ - 120.000 /հարյուր քսան հազար/ դրամ**

2. Գլխավոր մասնագետին - կատարել համապատասխան գործարքներ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 12 թ. *ապրիլի* 03  
գ.Դդմաշեն

